

Տիգրան Ռ. Եփրեմյան

ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻԶՄԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ.

ՀՈՒՐՈ ԳՐՈԹԻՈՒՄ*

«Եվ թող Աստված, ում է միայն պատկանում ինքնիշխան արքաների և իշխանների հակումների ու ցանկությունների տնօրինումը, դրոշմի այս սկզբունքները նրանց սրտերում և մտքերում, որ միշտ հիշեն, որ ամենավեհ ծառայությունը, որում մարդ կարող է ներգրավվել, մարդկանց կառավարումն է...»¹:

Հուզո Գրոթիուս

Բանալի բառեր – Հուզո Գրոթիուս, Ալ. Վենտ, ստորուկտուրալ կոնստրուկտիվիզմ, իդեալիզմ, հոլիզմ, գաղափարներ, խոսքային ակտեր, ինքնություններ, շահեր, ազգ, միջազգային հանրություն:

Մուտք

Հոլանդացի ականավոր մտածող և դիվանագետ Հուզո Գրոթիուսը (1583–1645 թթ.) արդարացիորեն համարվում է արդի միջազգային իրավունքի և հարաբերությունների համակարգի գլխավոր ճարտարապետը: 17-րդ դարի կեսերին, երբ Եվրոպայի հիմնական քաղաքական միավորներ ճանաչվեցին պետությունները, Գրոթիուսը առաջարկեց միջազգային իրավունքի նոր նախագիծ, որն արտացոլում էր այդ նոր իրողությունը²:

1648 թվականից ինքնիշխան պետությունների միջև ձևավորված հորիզոնական հարաբերությունները փոխարինեցին Կայսրության և Եկե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 29.10.2014:

1 Grotius, Hugo (1625), The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations, translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition – Washington & London: M. Walter Dunne, 1901), p. 418.
2 Scharf, Michael P., Seizing the “Grotian Moment”: Accelerated Formation of Customary International Law in Times of Fundamental Change, “Cornell International Law Journal” Vol. 43, p. 443.

Հ (ՃԲ) փարի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014
ՎԷՆ համառոտագրական հանդես

ղեցու հիերարխիայով քողարկված տարասեռ ֆեոդալական միավորների միջև ուղղաձիգ-աստիճանակարգային հարաբերություններին³: Գաղափարական առումով արդի միջազգային համակարգի կայացումը հիմնավորվեց ժամանակի խոշոր իրավագետների և քաղաքական իմաստասերների աշխատություններում: Խոսքը վերաբերում է մասնավորապես Հ. Գրոթիուսի «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» (De Jure Belli ac Pacis, 1625) և «Ազատ ծով» (Mare Liberum, 1608) աշխատություններին, որոնք ստեղծեցին ընդհանրական սկզբունքների համակարգ՝ ուրվագծելով ինքնիշխան տիրակալների և ազգերի խաղաղության ու ընդհանուր համաձայնության ուղիները⁴:

Ներկա աշխատանքում քննարկվում է Գրոթիուսի քաղաքական միտքը՝ արդի կոնստրուկտիվիզմի դիտանկյունից: Ըստ այդմ, ազգերի և ազգերի հասարակության հանդեպ Գրոթիուսի իդեալիստական և հոլիստական (ամբողջընկալական) մոտեցումը դիտարկվում է Ալեքսանդր Վենտի ստրուկտուրալ կոնստրուկտիվիզմի տեսության շրջանակներում:

Ըստ այս մոտեցումների՝ պետությունները (ազգերը) համախմբված են ընդհանուր համոզմունքներով և կազմակերպական կառույցներով, որոնք տալիս են նրանց օրինական հարկադրանքի տարածքային մենաշնորհ: Այս կերպ, միջազգային քաղաքական դերակատարների ինքնությունները ոչ թե մեկընդմիջտ տրված են, այլ սոցիալապես կառուցարկված: Այն է՝ գաղափարները ունակ են փոխելու միջազգային քաղաքականության բնույթը՝ ձևավորելով ընկերային կառույցներ և սահմանելով դերակատարներին ըստ որոշակի ինքնությունների և շահերի:

1. Կոնստրուկտիվիզմը միջազգային հարաբերություններում

Թեև միջազգային հարաբերություններում կոնստրուկտիվիզմի տեսությունը ձևակերպվել է 1980-90-ական թվականներին, բայց կոնստրուկտիվիստական մտածողության տարրերն առկա են դեռևս **Գրոթիուսի, Կանտի և Հեգելի** միջազգային քաղաքական տեսություններում: Այն լուրջ ներկայություն ունեւր միջազգային հարաբերություններում երկու համաշխարհային պատերազմների միջակայքում այն ձևով, ինչը հիմա միջազգային հարաբերությունների ուսումնասիրողները հաճախ անվանում են «իդեալիզմ»: Հետպատերազմյան շրջանում միջազգային քաղաքականության համար կարևոր կոնստրուկտիվիստական մոտեցումները զարգացրին **Կարլ Դոյչը, Էրնստ Հասսը և Հեյլի Բուլը**⁵:

Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային քաղաքականության տեսականացման համար իբրև շրջանակ էին ծառայում **ռեալիզմը** (իրապաշտություն), **մարքսիզմը** և **լիբերալիզմը** (ազատականություն)՝ ելա-

3 Տե՛ս **Teschke, Benno**, The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations. London, New York: Verso, 2003, p. 3.

4 Տե՛ս **Miller, Jon**, Hugo Grotius, “The Stanford Encyclopedia of Philosophy” (Spring 2014 Edition), Edward N. Zalta (ed.), URL = <http://plato.stanford.edu/archives/spr2014/entries/grotius/> (13.06.2014).

5 Տե՛ս **Wendt A.**, Social Theory of International Politics. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999, p. 3.

կետ ընդունելով **ուժը, շահը** (դասակարգային, պետական կամ ազգային) և **հաստատությունները**: Թեպետ այս տեսությունների ջատագովները տարաձայնություններ ունեն այս ելակետերի հարաբերական կշիռների վերաբերյալ, սակայն նրանք մեծ մասամբ համաձայն են, որ այս երեք գործոնները միասին («նյութական» գործոնները) բացատրում են միջազգային գործընթացների ելքերի մեծ մասը⁶:

Ի հակադրություն այս մատերիալիստական մոտեցումների՝ միջազգային հարաբերությունների մի շարք ուսումնասիրողներ այսօր ընդգծում են չորրորդ գործոնը՝ «**գաղափարները**»⁷:

Վերջին տասնամյակներին բազում գիտական աշխատություններ են գրվել միջազգային հարաբերություններում գաղափարների դերի վերաբերյալ: Մա միջազգային իրողության բնույթի բացատրման շուրջ տեսաբանական վեճ բորբոքեց ռացիոնալիստների (ռեալիստներ, նեոռեալիստներ և նեոլիբերալ ինստիտուցիոնալիստներ) և մեկնողական իմացաբանության ջատագովների (պոստմոդեռնիստներ, պոստստրուկտուրալիստներ, քննադատական տեսության տեսաբաններ) միջև: Աստիճանաբար այս տեսաբանական բախումը հանգեցրեց կոնստրուկտիվիստական մոտեցումների ազդեցության բարձրացմանը: Ավելին, կարիք առաջացավ տարբերակելու միջազգային հարաբերություններում գաղափարների դերի մեկնաբանման կոնստրուկտիվիստական և ռացիոնալիստական (նեոլիբերալ) մոտեցումները⁸:

Միջազգային քաղաքականության կոնստրուկտիվիստական մտքի վերածնունդը արագացավ Մառը պատերազմի վերջում, քանզի միջազգային հարաբերությունների հիմնական տեսությունները (նեոռեալիզմ, նեոլիբերալիզմ) պարզապես դժվարացան բացատրել «սառը պատերազմի» մոտալուտ ավարտը կամ համակարգային փոփոխությունն ընդհանրապես: Շատերին թվում էր, որ այդ դժվարությունները գալիս էին միջազգային հարաբերությունների մատերիալիստական և ինդիվիդուալիստական կողմնորոշումներից, և որ միջազգային քաղաքականության ավելի գաղափարականացված ու հոլիստիկ դիտանկյունը կարող էր ավելին անել: Այդպիսի դիտանկյուն էր կոնստրուկտիվիզմը՝ միջազգային համակարգի կառույցը դիտարկելով իբրև գաղափարների դասավորություն (տեղաբաշխում), քանզի այն ուներ իդեալիստական գոյաբանություն⁹: Հենվելով իր իդեալիստական և հոլիստական համոզմունքների վրա՝ 1992 թ. իր հայտնի հոդվածում Ա. Վենտը ձևակերպում է. «Անարխիան այն է, ինչ պետություններն են ստեղծում» («Anarchy Is What States Make of It») ¹⁰:

Ն. Օնաֆը առաջինն էր, որ 1989 թ. օգտագործեց «կոնստրուկտիվիզմ» եզրույթը իր «**Մեր կառուցած աշխարհը**» («World of Our Making») ¹¹

6 Տե՛ս **Wendt A.**, նույն տեղում, էջ 94:

7 Տե՛ս **Wendt A.**, նույն տեղում, էջ 92:

8 Տե՛ս **Adler E.**, Seizing the Middle Ground: Constructivism in World Politics, “European Journal of International Relations” (London: SAGE Vol. 3(3), pp. 319–320.

9 Տե՛ս **Wendt A.**, նույն տեղում, էջեր 4–5:

10 Տե՛ս **Wendt A.**, Anarchy is what States Make of it: The Social Construction of Power Politics, “International Organization” Vol. 46, No. 2 (MIT Press, Spring, 1992), pp. 394–395.

11 Տե՛ս **Onuf, Nicholas.** World of Our Making: Rules and Rule in Social Theory and International Relations.

աշխատության մեջ: Այնուհետև միջազգային հարաբերություններում կոնստրուկտիվիստական տեսությունը զարգացվեց Ա. Վենտի կողմից: Թեպետ միջազգային հարաբերություններում այս մոտեցման մեջ կենտրոնական դեր ունեն Վենտի աշխատությունները, այդուհանդերձ **Ն. Օնաֆը** և **Տ. Կրատոբվիլը** ևս կարևոր դեր են խաղացել կոնստրուկտիվիզմի կառուցարկման մեջ¹²:

Կոնստրուկտիվիզմի ընդհանրական սահմանման փորձ է կատարել Է. Ադլերը: Նա ձևակերպում է. «**Կոնստրուկտիվիզմը նյութական աշխարհի դինամիկ, նորմատիվ և իմացական մեկնաբանություններից կախված այն կերպն է և հայացքը, որում նյութական աշխարհը ձևավորում է և ձևավորված է մարդկային գործակցությամբ ու փոխգործակցությամբ**»¹³: Այն է՝ կոնստրուկտիվիզմը ցույց է տալիս, որ անգամ ամենաամուր ընկերային հաստատությունները հիմնված են հավաքական ըմբռնումների վրա, որ դրանք մարմնական կառույցներ են, որոնք մի ժամանակ ծնվել են ոչնչից՝ մարդկային երևակայությամբ և ապա տարածվել ու համախմբվել: Ինչևէ, կոնստրուկտիվիզմը առաջարկում է միջազգային հարաբերությունների ըմբռնման ընդհանուր շրջանակ, որում կարող են տեղավորվել մի շարք մոտեցումներ և տեսություններ: Ըստ այդմ, կոնստրուկտիվիստական ձամբարը տարասեռ է և չունի ընդհանուր սահմանում¹⁴:

Այն տեսությունները, որոնց համաձայն միջազգային կառույցը և սոցիալապես բաշխվող հիմնարար գիտելիքը ազդում են ոչ միայն պետությունների վարքագծի, այլև ինքնությունների և շահերի վրա, համարվում են «կոնստրուկտիվիստական»: Այդպիսին է «**անգլիական դպրոց**»-ը («**Գրոթիուսյան դպրոց**»), որը ասոցացվում է **Հեդլի Բուլի** (1932–1985 թթ.) հետ: Այն բաց կերպով չի անդրադառնում պետական ինքնությունների ձևավորմանը, բայց միջազգային համակարգին մոտենում է ինչպես հանրություն, որը կարգավորվում է ընդհանուր նորմերով: Այդպիսին է նաև **Ռորերտ Քոքսի «նեոգրամշիական մարքսիզմը**», որը մյուս մարքսիստական տեսություններից ավելի է հետաքրքրված գաղափարաբանության դերով և այլք¹⁵:

Կոնստրուկտիվիզմը միջազգային քաղաքականությունը դիտարկում է իբրև «սոցիալական կառույց», համաբերված և ոչ թե տրված: Պետությունները կարող են լինել ինքնաշահ (self-interested), բայց նրանք շարունակաբար սահմանում և վերասահմանում են դա: Նրանց ինքնությունները կարող են փոխվել: Նորմերը օգնում են սահմանելու իրավիճակները և նշանակալիորեն ազդելու միջազգային գործընթացի վրա¹⁶: Հենվելով տարբեր սոցիալական տեսությունների վրա (քննադատական տեսություն, պոստմոդեռնիզմ, պատմական ինստիտուցիոնալիզմ, սոցիոլոգիական ինստի-

Columbia: University of South Carolina Press, 1989.

12 Տե՛ս **Zehfuss M.**, Constructivism in International Relations: The politics of reality. New York: Cambridge University Press, 2004, pp. 10–11.

13 Տե՛ս **Adler E.**, նույն տեղում, էջ 322:

14 Տե՛ս **Zehfuss M.**, նույն տեղում, էջ 7:

15 Տե՛ս **Цыганков, П. А.** (Рук. авт. колл.), Международные отношения: социологические подходы // М., «Гардарика», 1998, с. 84–85.

16 Տե՛ս **Zehfuss M.**, նույն տեղում, էջ 4–5:

տուցիոնալիզմ և այլն), միջազգային քաղաքականությունն ուսումնասիրողները աստիճանաբար ընդունել են «կոնստրուկտիվիզմի» երկու հիմնական դրույթներ.

ա) ընկերային կառույցները առաջին հերթին որոշարկվում են ընդհանուր գաղափարներով, քան նյութական ազդակներով (material forces),

բ) դերակատարների ինքնությունը և շահերը կառուցված են ընդհանուր գաղափարներով, քան տրված են բնությամբ:

Առաջինը իդեալիստական մոտեցում է ընկերային կյանքի նկատմամբ: Երկրորդը «իդիստական» կամ «ստրուկտուրալիստական» մոտեցում է: Ըստ այդմ կոնստրուկտիվիզմը կարելի է դիտարկել իբրև յուրօրինակ «ստրուկտուրալ իդեալիզմ»¹⁷: Ինչևէ, կան կոնստրուկտիվիզմի տարբեր ձևեր:

Ընկերային կյանքում նյութական ուժերի և գաղափարների հարաբերական կարևորության շուրջ բանավեճը նոր չէ միջազգային հարաբերությունների տիրույթում: Գործնականում տեսաբանները խմբվում են մատերիալիզմի և իդեալիզմի շուրջ: Երկու կողմերն էլ ընդունում են գաղափարների դերը, բայց նրանք չեն համաձայնում, թե որքան մեծ է դրանց ազդեցությունը¹⁸:

Համաձայն մատերիալիստների՝ հասարակության ամենահիմնարար գործոնը բնությունն է և նյութական ուժերի կազմակերպումը (organization of material forces): Մատերիալիստական տրամասույթում (discourse) Ա. Վենտը առանձնացնում է առնվազն հինգ նյութական գործոն՝ 1. մարդկային բնություն, 2. բնական ռեսուրսներ, 3. աշխարհագրություն, 4. արտադրական ուժեր և 5. ապակառուցողական ուժեր: Մրանք կարող են ազդել տարբեր կերպ, սակայն այս հնարավորությունները չեն խանգարում գաղափարներին նույնպես որոշ ազդեցություն ունենալու: Այսինքն, ըստ մատերիալիստների՝ ոչ նյութական ուժերի ազդեցությունը երկրորդական է¹⁹:

Համաձայն իդեալիստների՝ հասարակության ամենահիմնարար գործոնը բնությունն է և ընկերային գիտակցությունը: Վերջինը Վենտը անվանում է նաև «գաղափարների կամ գիտելիքի տեղաբաշխում»: Երբեմն այս կառույցը կիսված է դերակատարների միջև նորմերի, կանոնների կամ հաստատությունների տեսքով, երբեմն՝ ոչ: Երկու դեպքում էլ ընկերային կառույցը կարող է ազդել տարբեր կերպ՝ սահմանելով ինքնություններ և շահեր, օգնելով դերակատարներին՝ գտնելու խնդիրների համար ընդհանուր լուծումներ, որոշելով վարքագծի կանոններ և այլն: Այս հնարավորությունները չեն հերքում նյութական ուժերի դերը, սակայն, ըստ իդեալիստների, նյութական ուժերը երկրորդական են: Ըստ Ա. Վենտի՝ միջազգային համակարգի նյութական բևեռացումը նշանակություն ունի, բայց թե ինչ նշանակություն ունի, կախված է այդ բևեռների բարեկամներ կամ թշնամիներ լինելու հանգամանքից, ինչը ընդհանուր գաղափարների գործառույթ է: Ի տարբերություն գաղափարները խիստ

17 Wendt A., Social Theory of International Politics, p. 1.

18 Стів Цыганков П. А. (Рук. авт. колл.), указ. соч., с. 68.

19 Стів Wendt A., Social Theory of International Politics, p. 23.

պատճառահետևանքային պայմաններում դիտարկելու մատերիալիստական միտումի՝ Վենտը սա ձևակերպում է իբրև «գաղափարների կառուցիկ հետևանքներ» (the constitutive effects of ideas)²⁰:

Վենտը անդրադառնում է նաև կառույցների և դերակատարների միջև հարաբերություններին: Այն, որ կառույցը կազմակերպում է դերակատարներին, նշանակում է ունի որակական հետևանքներ, իսկ այն, որ զսպում է, ունի փոխգործակցային հետևանքներ: Եվ քանի որ առաջին դեպքում այն հաճախ ունենում է վարքագծային հետևանքներ, իսկ երկրորդ դեպքում որակական հետևանքներ չի ունենում, կարելի է եզրակացնել, որ վերջիններս ավելի խորքային են: Ինչպես որակական, այնպես էլ վարքագծային հետևանքները կարող են ձևավորվել կառույցների կողմից: Ըստ Վենտի՝ միջազգային համակարգը բարդություն է ներկայացնում հոլիստական մոտեցման համար, քանզի նրա նվազ խտությունը նշանակում է, որ պետությունների ինքնությունները և շահերը համեմատաբար ավելի շատ են կախված ներպետական, քան միջազգային համակարգի կառույցներից: Հետևաբար միջազգային համակարգի կառույցը ազդում է պետությունների ինքնության վրա հետևանքների երկու տեսակների միջոցով: Համակարգայինները կարող են ավելի փոքր լինել, քան ներքին կառույցների հետևանքները, և իհարկե, պետական ինքնության ամբողջական տեսությունը իր մեջ կներառի էական ներքին բաղադրիչ²¹:

Վենտի կարծիքով միջազգային հարաբերությունները սոցիալապես կառուցարկված են (socially constructed) և ոչ թե պատմականորեն տրված (transhistorically given): Առանձնացվում է կոնստրուկտիվիզմի երկու սկզբունք: Առաջին, մարդիկ գործում են ըստ այն նշանակության, որ առարկաները կամ այլ դերակատարներ ունեն իրենց համար: Երկրորդ, այս նշանակությունները զարգանում են փոխազդեցությամբ... Ինքնություններն էլ ձևավորում են շահեր... Հավաքական ինքնություն ունեցող դերակատարները իրենց շահերը սահմանում են՝ հենվելով համերաշխության, համայնքի և հավատարմության վրա²²: Կոնստրուկտիվիստները հավատում են, որ միջազգային հարաբերությունները ամենից առաջ կազմված են սոցիալական փաստերից, որոնք փաստեր են միայն մարդկային համաձայնությամբ: Այսու՝ կոնստրուկտիվիզմը փորձ է կամրջելու պոզիտիվիստական (մատերիալիստական) և իդեալիստական (մեկնաբանական) մոտեցումները²³:

Ու քանի որ սոցիալականության (sociality) հիմքը ընդհանուր գիտելիքն է, դա հանգեցնում է կառույցի իդեալիստական ըմբռնմանը՝ իբրև «գիտելիքների տեղաբաշխում» կամ «վերից վար գաղափարներ» (կամ՝ գրեթե): Կառույցի այս կոնցեպտուալիզացիան ոչ թե նշանակում է, որ նյութական ուժերը և շահերը անկարևոր են, այլ ավելի շուտ այն, որ նրանց նշանակությունը և հետևանքները կախված են համակարգի ընկերային կառույցից, ինչպես, օրինակ, «Սառը պատերազմը» ավարտվեց

20 Wendt A., նույն տեղում, էջ 24:

21 Տե՛ս Цыганков П. А. (Рук. авт. колл.), նույն տեղում, էջեր 72-74:

22 Տե՛ս Zehfuss M., նույն տեղում, էջեր 15-16:

23 Տե՛ս Adler E., նույն տեղում, էջ 323:

1989-ին, իսկ փոփոխությունները նյութական բևեռներում տեղի ունեցան 1991-ին ԽՍՀՄ փլուզումով և երկբևեռայնության ավարտով²⁴:

Ի պատասխան Ֆ. Կրատոքվիլը կենտրոնանում է առօրյա լեզվի և մարդկային վարքագիծը ուղղորդող նորմերի վրա: Նա պնդում է, որ միջազգային քաղաքականությունը պետք է վերլուծվի ընդհանուր նորմերի համատեքստում: Կրատոքվիլը ավելի մոտ է «ռացիոնալության» հղացքի հետ կապված ողջախոհությանը: Այն է՝ թեպետ կանոնները և նորմերը ազդում են մարդկային վարքագծի վրա, դրանք չեն որոշում այն²⁵: Այսու միջազգային ռեժիմները նպատակաուղված են պայմանավորելու պետությունների վարքագիծը միմյանց հանդեպ՝ անկախ համակարգային փոփոխություններից և հաստատութենական քայքայումից: Այս առումով միջազգային ռեժիմները պետք է վայելեն հարաբերական ինքնավարություն²⁶:

Ն. Օնաֆի կոնստրուկտիվիստական տեսությունը կառուցված է այն տեսակետի վրա, որ հանրությունը և մարդիկ կառուցում են միմյանց շարունակական երկյուղի գործընթացում: Գործերը, որ կարող են բաղկացած լինել «խոսքային ակտերից» (speech acts) կամ ֆիզիկական գործողություններից, կառուցարկում են աշխարհը: Որպեսզի գործերը ընդունակ լինեն կառուցարկելու իրականությունը, նրանք պետք է նշանակություն (իմաստ) ունենան: Ըստ Օնաֆի՝ իմաստը մարդկային ընկերային հարաբերություններում կախված է կանոնների գոյությունից: Կանոնները կարգավորում են աշխարհը և սահմանում իրավիճակներ: Կանոնները ուղեցույց են մարդկային վարքագծի համար և դրանով իսկ հնարավոր են դարձնում ընդհանուր իմաստի գոյությունը: Մարդիկ, ինչպես նաև ընկերային կառույցները, ինչպիսիք են պետությունները, դառնում են գործակալներ հանրության մեջ միայն կանոնների միջոցով: Օնաֆի կանոնների հղացականությունը կախված է «խոսքային ակտից», որը հանգեցնում է գործողության: Ուստի լեզուն ոչ միայն նկարագրում կամ ներկայացնում է իրականությունը, այլև կառուցում է իրականությունը²⁷:

«Խոսքային ակտի» հաջողությունը կախված է հասցեատիրոջ պատասխանից: Հաճախակի կրկնվելու դեպքում խոսքային ակտերը կարող են ունենալ համադրելի հետևանքներ և վերածվել համաձայնագրի (convention): Երբ գործակալներն ընդունում են այն, համաձայնագիրը վերածվում է կանոնի²⁸: Կանոնները հասարակություններին տալիս են իրենց ինքնությունները և ուղղությունները: Այլ կերպ ասած, կառուցարկման և հաստատութենականացման գործընթացները առանցքային են իրականության Օնաֆի հղացքի համար: Մարդկային էակները կառուցում են իրականությունը խոսքային ակտերի միջոցով, որոնք հաստատութենականացվում են՝ մարդկային գործողության իմաստի համար ապա-

24 Տես **Wendt A.**, Social Theory of International Politics, p. 20.

25 Տես **Zehfuss M.**, նույն տեղում, էջեր 16-17:

26 Տես **Kratochwil F. and Ruggie J.**, International Organization: A State of the Art on an Art of the State, "International Organization", Vol. 40, N 4 (MIT Press, Autumn, 1986), p. 760.

27 Տես **Onuf N.**, The Constitution of International Society, "European Journal of International Law", Vol. 5, N 1, 1994, pp. 10-19.

28 Տես **Zehfuss M.**, նույն տեղում, էջեր 19-22:

հովելով համատեքստ և բազիս²⁹: Ըստ այդմ միջազգային համակարգում հիմնարար փոփոխությունը տեղի է ունենում, երբ դերակատարները իրենց գործունեությամբ փոխում են միջազգային փոխազդեցության սահմանադիր կանոնները և նորմերը³⁰:

Օնաֆն իր տեսությունը անվանում է «կոնստրուկտիվիզմ»՝ ընդգծելու համար իր համոզմունքը առ այն, որ «անհատները և հասարակությունը շարունակաբար սահմանում են միմյանց կանոնների միջոցով, և որ այդ կանոնները կախված են լեզվի կատարողական ուժից: Այսինքն՝ կոնստրուկտիվիզմը լրացնում է Լուսավորականության համոզմունքը լեզվի ուժի նկատմամբ՝ հաստատելու համար բանականությունը, և չափավորում է համոզմունքը լեզվի ուժի հանդեպ՝ ներկայացնելու համար աշխարհը ինչպիսին որ կա»³¹:

Ի տարբերություն Օնաֆի և Կրատոքվիլի, որոնք տեսակետներ են կիսում կանոնների և «խոսքային ակտի տեսության» (speech act theory) շուրջ, Վենտը կենտրոնանում է ինքնության խնդրի շուրջ: Ըստ այդմ, միջազգային հարաբերություններում կոնստրուկտիվիստական մոտեցման առանցքը միջինքնութենական հարաբերությունների խնդիրն է: Վենտը գրում է. «Միջազգային քաղաքականության առօրյա կյանքը պետությունների՝ ուրիշների հետ հարաբերությամբ ինքնություններ ձեռք բերելու շարունակական գործընթաց է՝ նետելով նրանց համապատասխան հակընդդեմ ինքնությունների (counter-identities) մեջ և խաղարկելով արդյունքը: Այս ինքնությունները փոխելը կարող է դժվար լինել, սակայն դրանք քարի վրա փորագրված չեն և, իսկապես, երբեմն միակ փոփոխական դերակատարներն են, որ կարող են շահարկել իրավիճակը: Այս գործընթացի ղեկավարումը արտաքին քաղաքականության հիմնական գործնական խնդիրն է, և նրա բարոյագիտական չափումը այն հարցն է, թե ինչպես մենք պետք է վերաբերվենք ուրիշին»³²:

Վենտը պնդում է, որ շահերը սահմանող (interest-constituting) գաղափարները իրենց հերթին սահմանված են միջազգային համակարգի մշակույթով կամ ընդհանուր գաղափարներով: Գաղափարները այս մակրո մակարդակում հասնում են պետությունների գլուխներին և վերածվում շահերի արդեն այլ, միջազգային կառույցի ավելի միկրո մակարդակում³³:

Համաձայն Վենտի ստրուկտուրալ կոնստրուկտիվիզմի տեսության՝ միջազգային քաղաքական մշակույթի փոփոխությունը հնարավոր է, բայց ոչ հեշտ, և կախված է տվյալ պատմական պայմաններից, քանզի իբրև ինքնակարգավորվող մարգարեություն՝ մշակույթը ունի բնական հավասարակշիռ միտումներ³⁴:

Իդեալիստական սոցիալական տեսության համաձայն՝ մարդիկ գործում են միմյանց կամ առարկաների նկատմամբ ըստ այն իմաստների, որ նրանք ունեն իրենց համար: Ամերիկյան և խորհրդային համոզմունքը

29 Տե՛ս նույն տեղում, էջեր 151–152:

30 Նույն տեղում, էջ 94:

31 Onuf N., նույն տեղում, էջ 4:

32 Wendt A., Social Theory of International Politics, p. 21.

33 Տե՛ս նույն տեղում, էջ 125:

34 Տե՛ս նույն տեղում, էջեր 314–315:

«սառը պատերազմի» տարիներին, թե իրենք թշնամիներ են, գիտելիք էր այս իմաստով: Ընկերային կառույցի գաղափարական ասպեկտը կարելի է դիտարկել իբրև «գիտելիքի տեղաբաշխում»: Գիտելիքի տեղաբաշխումը ավելի լայն ֆենոմեն է, քան շահերի տեղաբաշխումը՝ ներառյալ և շահերի գաղափարական բաղադրիչը, և ընդհանուր համոզմունքներն ու սպասումները... Գիտելիքը կարող է լինել և մասնավոր, և ընդհանուր: Մասնավոր գիտելիքը բաղկացած է համոզմունքներից, որ կրում են անհատ դերակատարները: Պետությունների դեպքում այս տեսակ գիտելիքը հաճախ բխում է ներքին կամ գաղափարաբանական նկատառումներից: Մասնավոր գիտելիքը առանցքային դեր ունի, թե ինչպես են պետությունները սահմանում իրենց միջազգային դիրքերը և որոշում իրենց ազգային շահերը: Երբ 1519 թ. իսպանացիները հանդիպեցին ացտեկներին, յուրաքանչյուր կողմը նախահարձակ եղավ մասնավոր՝ «ես»-ի և «ուրիշ»-ի մասին ներքնապես արմատացած համոզմունքներով, որոնք սահմանում էին իրենց շահերը և իրավիճակը: Յուրաքանչյուր կողմ իր համոզմունքները ձյնարիտ էր համարում, թեպետ կողմերը չունեին համապատասխան փորձառություն միմյանց նկատմամբ³⁵:

Սոցիալապես ընդհանուր գիտելիքը (socially shared knowledge) ընդհանուր է անհատների համար: Մինչև 1519 թ. ացտեկը կարող էր ընդհանուր համոզմունք ունենալ իսպանացու հետ ստրկատիրության վերաբերյալ, սակայն այս համոզմունքը մշակութային չէր: Ընդհանուր գիտելիքը կարող է լինել և համագործակցային, և հակամարտող: Թշնամիներ լինելը կարող է լինել նույնքան մշակութային փաստ, որքան ընկերներ լինելը³⁶:

Ի հավելումն իդեալիզմի՝ կոնստրուկտիվիզմի առանցքային առանձնահատկությունն է հոլիզմը կամ ստրուկտուրալիզմը՝ այն դիտանկյունը, ըստ որի ընկերային կառույցների ազդեցությունները չեն կարող սահմանափակվել գործակալներով և նրանց փոխազդեցություններով: Այս ազդեցությունների շարքում է ինքնությունների և շահերի ձևավորումը, որոնք պայմանավորված են դիսկուրսիվ կազմավորումներով, համակարգում գաղափարների տեղաբաշխմամբ, ինչպես նաև նյութական ուժերով և որպես այդպիսին ձևավորված չեն վակուումում³⁷:

Վենտը առանձնացնում է ինքնության չորս տեսակներ՝ 1) անհատական կամ խմբային (personal or corporate), 2) տեսակին ներհատուկ (type), 3) դերային (role), և 4) հավաքական (collective): Անձնական կամ կազմակերպությունների դեպքում խմբային ինքնությունները սահմանված են ինքնակազմակերպվող, հավասարակշիռ կառույցներով³⁸: Ինքնությունները ինքնին չեն բացատրում գործողությունները, քանզի լինելը նույնը չէ, ինչ ուզելը... Առանց շահերի ինքնությունները չունեն շահագրգռություն, իսկ առանց ինքնությունների շահերը չունեն ուղղություն³⁹:

Այսպիսով, ինքնություններն են ձևավորում շահերը: Դերակատարների

35 Wendt A., նույն տեղում, էջ 140:

36 Տեն նույն տեղում, էջ 141:

37 Տեն նույն տեղում, էջ 138:

38 Տեն նույն տեղում, էջ 224:

39 Տեն նույն տեղում, էջ 231:

շահերը սոցիալական համատեքստից անկախ չեն, ընդհակառակը, դերակատարները սահմանում են իրենց շահերը իրավիճակի սահմանման գործընթացում: Երբեմն իրավիճակներն աննախադեպ են, և մարդիկ են կառուցում նրանց իմաստը, այդպիսով նաև իրենց շահերը՝ նախադեպերով կամ նորարարությամբ: Հաճախ նրանք ունեն առտոնին որակներ, որոնց մարդիկ վերագրում են իմաստներ ըստ հաստատութենականապես սահմանված դերերի⁴⁰:

Անփոփելով կոնստրուկտիվիստական տարրեր մոտեցումները՝ միջազգային հարաբերություններում գաղափարների դերը կարող ենք պատկերել ստորև ներկայացված սխեմայով.



Դերակատարները գործում են ըստ միջավայրի և ուրիշների մասին իրենց համոզմունքների, ինչը միտված է վերարտադրելու այդ համոզմունքները: Ինքնիրագործվող մարգարեության գաղափարը (self-fulfilling prophecy idea) կարող է շատ բան բացատրել ընկերային կյանքի արտադրության և վերարտադրության մասին⁴¹: «Սառը պատերազմի» ընթացքում, որը մշակութային գոյացություն էր, Միացյալ Նահանգները և Խորհրդային Միությունը ընդհանուր համոզմունք ունեին, որ իրենք թշնամիներ են, ինչն օգնում էր սահմանելու իրենց ինքնություններն ու շահերը տվյալ իրավիճակում և վերարտադրելու «սառը պատերազմը»: Ընկերային ընդհանուր գիտելիքը առանցքային դեր է խաղում որոշ ժամանակով փոխազդեցությունը կանխատեսելի դարձնելու համար, առաջացնելով հավասարակշիռ (homeostatic) միտումներ, որոնք կայունացնում են ընկերային կարգը: Այդ կերպ մշակույթը միտված է վերարտադրելու ինքն իրեն⁴²:

Այնուամենայնիվ, ըստ Վենտի՝ պետությունները միշտ կլինեն շրջահայաց, և երբեմն վատթարագույն ենթադրություններն արդարացված են, սակայն շրջահայացությունը չի նշանակում, որ նրանք փորձը քամուն կտան. «Պատմությունը նշանակություն ունի» (History matters): Եվ քանզի պատմությունը մասամբ հիմնված է այն բանի վրա, թե ինչպիսին են ուրիշների շահերը իրականում, անարխիսիայի իմաստի և ուժերի տեղա-

40 Տե՛ս **Wendt A.**, *Anarchy Is What States Make of It*, p. 397.

41 Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*, p. 108.

42 Տե՛ս նույն տեղում, էջ 187:

բաշխման սահմանման մեջ շահերի տեղաբաշխումը պետք է ունենա անկախ դեր: Այս առումով «**բանական ընտրության տեսությունը**» միջազգային հարաբերություններում գաղափարների և շահերի հարաբերության մասին հիմնական շրջանակներից է⁴³:

Ռացիոնալիստական մոդելները ենթադրում են, որ համակարգային կառույցը (system structure) ազդում է միայն պետությունների վարքագծի վրա, բայց ոչ նրանց ինքնությունների և շահերի: Ի հակադրություն Վենտը պնդում է իր հոլիստական մոտեցումը, այն է՝ «միջազգային քաղաքականության կառույցը ևս ունի կառուցարկող ազդեցություն պետությունների վրա»⁴⁴:

Վենտի ձևակերպմամբ հաստատությունները հակադրվում են անհատներին իբրև հարկադրանքի ընկերային իրողություններ, սակայն շարունակում են գործել ըստ հավաքական գիտելիքի: Ինքնությունները և այսպիսի հավաքական իմացությունները գոյություն չունեն մեկը մյուսից անջատ. դրանք փոխադարձաբար կառուցիկ են (mutually constitutive): Ըստ այդմ, հաստատութենականացումը նոր ինքնությունների և շահերի յուրացման գործընթաց է⁴⁵:

2. Կոնստրուկտիվիզմի տարրերը Հուգո Գրոթիուսի միջազգային քաղաքական մտքի համատեքստում

Պատահական չէ, որ Ա. Վենտի վերը բերված հարցադրումներից հարյուրամյակներ առաջ իր «**Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին**» և «**Ազատ ծով**» աշխատություններում Հուգո Գրոթիուսը կենտրոնական նշանակություն էր տալիս միջազգային իրողության ընկերային բնույթին և **միջազգային հանրության** (պետությունների հասարակության) հղացքին: Գրոթիուսը գրում է. «Վեճերը առաջանում են նրանց միջև, ովքեր իրենց տարաձայնությունները լուծելու համար կապված չեն միասին ընդհանուր քաղաքացիական օրենքներով...»⁴⁶:

Ըստ Գրոթիուսի՝ քաղաքացիական իրավունքը բխում է քաղաքացիական իշխանությունից, ինչը պետության ինքնիշխան իշխանությունն է: Գրոթիուսը սահմանում է. «Պետությունը ընդհանուր իրավունքները և առավելությունները վայելելու համար միավորված ազատ մարդկանց կատարյալ մարմին է... **Սակայն ազգերի իրավունքը ավելի ծավալուն իրավունք է, որի իշխանությունը բխում է բոլոր ազգերի կամ գոնե շատերի համաձայնությունից:** Շատերի, որովհետև հազվագյուտ իրավունք կարող է գտնվել ընդհանուր բոլոր ազգերի համար, բացառությամբ բնական իրավունքի, որն ինքնին նույնպես սովորաբար կոչվում է ազգերի

43 Տե՛ս նույն տեղում, էջեր 109-115:

44 Նույն տեղում, էջ 248:

45 Տե՛ս **Wendt A.**, Anarchy Is What States Make of It, p. 399.

46 **Grotius, Hugo** (1625), The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations, translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition – Washington & London: M. Walter Dunne, 1901), p. 17.

իրավունք»⁴⁷: **Հայսմ՝ ազգերի իրավունքի շուրջ համաձայնությունը ընդհանուր գաղափարների գործառույթ է:**

Գրոթիուսը տարբերում է իրավունքի երեք տեսակ՝ **բնական իրավունք, աստվածային իրավունք** և **մարդկային իրավունք**: Բնական իրավունքը ճշմարիտ բանականության թելադրանքն է: Աստվածային իրավունքը բխում է աստվածային կամքից, որով այն առանձանանում է բնական իրավունքից: Այդու՝ «բնության օրենքը այնքան անփոփոխելի է, որ այն չի կարող փոխվել անգամ Աստծո կողմից: Թեպետ և Աստծո իշխանությունն անսահման է, այնուհանդերձ, կան բաներ, որոնց վրա այն չի տարածվում»⁴⁸:

Գրոթիուսի իրավական լեզվում ծովը կոչվում է «ոչ ոքի սեփականություն» (*res nullius*) կամ «ընդհանուր տիրույթ» (*res communis*), «հանրային տիրույթ» (*res publica*)⁴⁹: Զարգացնելով ազատ ծովերի տեսությունը՝ Գրոթիուսը առաջ է քաշում ազգերի իրավահավասարության և առևտրի ազատության սկզբունքները: Այդ կերպ նա փորձում էր ցույց տալ, որ հոլանդացիները իրավունք ունեն նավարկելու Իստ Ինդիա և առևտրի մեջ մտնել այնտեղի ժողովրդի հետ: Իր փաստարկը նա հիմնում է «Ազգերի իրավունքի հետևյալ ամենայուրահատուկ և անառարկելի քրսիումի վրա, որ կոչվում էր առաջնային կանոն կամ առաջին սկզբունք, և որի ոգին ակնհայտ է և անփոփոխ, այն է. «Յուրաքանչյուր ազգ ազատ է ձանապարհորդելու յուրաքանչյուր այլ ազգի մոտ և առևտուր անելու նրա հետ»⁵⁰:

Իրավունքի աղբյուրները քննելուց հետո Գրոթիուսը եզրահանգում է. «Բնական վիճակում ինքնապահպանությունը և ամեն բան համահունչ պահելը և բնությանը հակասող ամեն ինչի կանխումը առաջին պարտականությունն է»⁵¹:

Պատերազմի և խաղաղության արդարացման վերաբերյալ Գրոթիուսի և Վենտի մոտեցումները համընկնում են⁵²: Զուգահեռաբար զարգացնելով ազգերի բնական փոխկախվածության տեսությունը և ազգերի համայնքի հղացքը՝ Գրոթիուսը գրում է. «Աստված ինքն է ասում սա՛ խոսելով բնության ձայնով, և քանզի Իր կամքով չէ յուրաքանչյուր վայր կենսական բոլոր անհրաժեշտ միջոցներով Բնության մատակարարում ապահովելը,

47 **Grotius, Hugo**, *The Rights of War and Peace*, p. 25.

48 Նույն տեղում, էջեր 21–22:

49 **Grotius, Hugo** (1608), *The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade*. Translated with A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, Edited with an Introductory Note by James Brown Scott (New York: Oxford University Press, 1916), This is version 1.0 of the Frellock Book Series edition, Oslo, 2008, p. 22.

50 **Grotius, Hugo**, *The Freedom of The Seas*, p. 7.

51 **Grotius, Hugo**, *The Rights of War and Peace*, p. 31.

52 Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*, p. 8. Վենտը գրում է. «Ընկերային կյանքում բռնության կարգավորումը կարգի ամենահիմնարար խնդիրներից է, քանզի այն խորապես ազդում է նաև բոլոր տեսակի մյուս ընկերային հարաբերությունների վրա: Եթե մարդիկ մտադրված են ոչնչացնելու կամ նվաճելու միմյանց, նրանք չեն համագործակցի առևտրի կամ մարդու իրավունքների բնագավառում: Իշխանությունը կարող է լինել ամենուր, բայց դրա ձևերը տարբերվում են ըստ կարևորության, և կազմակերպված բռնության մեջ ներգրավվելու իշխանությունը ամենահիմնականներից է: Եվ երբ միջազգային հարաբերություններում բռնությունը կարգավորելու անհրաժեշտություն է առաջանում, ի վերջո, դա պետք է անեն պետությունները, քանզի պետությունը քաղաքական իշխանության կառույց է՝ կազմակերպված բռնություն գործադրելու օրինական մենաշնորհով»:

Նա սահմանում է, որ որոշ ազգեր աչքի ընկնեն մի արվեստում, և մյուսները՝ այլ: Ինչու՞ է Իր կամքն այսպիսին, եթե ոչ, որ Նա ցանկացավ մարդկային ընկերությունը կապակցել փոխադարձ կարիքներով և ռեսուրսներով, գուցե, հակառակ դեպքում, անհատները իրենց լիովին ինքնաբավ համարելու պատճառով կցուցաբերեին ինքնամոտություն (unsociable): Այսու՝ աստվածային արդարության որոշմամբ էր պայմանավորված, որ մի ժողովուրդ մատակարարելու էր մյուսի կարիքները, որպեսզի, ինչպես հռոմեացի գրող Պլինիոսն է ասում, այս կերպ, ինչ էլ որ արտադրվել է որևէ տեղում, կարծես թե նախատեսված էր լինելու բոլորի համար: Ուստի նրանք, ովքեր մերժում են այս օրենքը, ոչնչացնում են մարդկային ընկերակցության այս ամենաողջունելի կապը, վերացնում փոխադարձ ծառայություն կատարելու հնարավորությունները, մի խոսքով՝ բռնություն գործադրում Բնության նկատմամբ: Ուստի այս իրավունքը պատկանում է հավասարապես բոլոր ազգերին»⁵³:

Ըստ Գրոթիուսի՝ բարբարոսների քաղաքակրթումը դարձել էր պատրվակ ագրեսիայի համար, և այլոց ունեցվածքի նկատմամբ ագահ ձգտումը հաճախ թաքնվում էր նման պատրվակի ետևում: Ազգերին իրենց կամքին հակառակ քաղաքակրթական ավելի բարձր մակարդակի բարձրացնելու պատրվակը, որը ժամանակին օգտագործվել էր Ալեքսանդր Մեծի կողմից, անարդար է⁵⁴: «Քանզի նրանք, ովքեր պատերազմում են բարբարոս ժողովուրդների դեմ, ինչպես իսպանացիներն արեցին Ամերիկայի բնիկների նկատմամբ, սովորաբար պնդում են երկու պատրվակներից մեկը կամ մյուսը. կամ, որ մերժվել է նրանց առևտրի իրավունքը, կամ, որ բարբարոսները չեն ցանկանում ընդունել ճշմարիտ հավատի վարդապետությունները»⁵⁵: Գրոթիուսը պնդում է, որ նրանք չպետք է զրկվեն սեփական տիրույթների նկատմամբ ինքնիշխանությունից իրենց անհավատության պատճառով, քանզի «ինքնիշխանությունը դրական իրավունքի խնդիր է, և անհավատությունը՝ աստվածային իրավունքի, որը չի կարող խափանել դրական իրավունքը»⁵⁶:

Երբեմն միջազգային քաղաքականությունը չունի մշակույթ, և դերակատարները չունեն ընդհանուր գաղափարներ: Իսպանացիների և ացտեկների հարաբերությունների կառույցը 1519 թ. «ընկերային» (“social”) էր, սակայն «մշակութային» չէր: Ինչևէ, այսօր պետությունները շատ բան գիտեն միմյանց մասին, և այդ գիտելիքի կարևոր մասը ընդհանուր է⁵⁷:

Ընդհանուր գիտելիքը ոչ այլ ինչ է, քան համոզմունքներ գլուխներում, ոչ այլ ինչ, քան «ընդհանուր մտավոր մոդելներ»: Մշակույթը նշանակություն ունի այնքանով, որքանով այն ազդում է դերակատարների հաշվարկների վրա: Ավելին, մշակույթը գիտելիքի հավաքական ներկայացումներն են: Դրանք խմբեր ներկայացնող գիտելիքի կառույցներ են, որոնք ժամանակի ընթացքում անհատական վարքագծում առաջացնում

53 Grotius, Hugo, The Freedom of The Seas, pp. 7–8.

54 Տե՛ս նույն տեղում, էջ 14:

55 Նույն տեղում, էջ 18:

56 Նույն տեղում, էջ 20:

57 Տե՛ս Wendt A., Social Theory of International Politics, p. 158.

են մակրո մակարդակի մոդելներ⁵⁸: Օրինակները ներառում են կապիտալիզմը, Վեստֆալյան համակարգը, ապարտեիդը, ազատ առևտրի ռեժիմները, պետությունները և այլն:

Հավաքական գիտելիքի ազդեցությունները չեն հանգեցնում անհատական համոզմունքների: Կապիտալիզմի մասին համոզմունքները կարող են լինել սխալ կամ ոչ ամբողջական, մինչդեռ նրանց առաջացրած գործողությունները դեռ կարող են միտված լինել վերարտադրելու այն հավաքական ներկայացումը, որ կոչվում է կապիտալիզմ: Նույն կերպ առնվազն 1867-ից իբրև Կանադա հայտնի հավաքական ներկայացումը գոյություն ունի, որ թեպետ իր անդամների 100 տոկոս փոփոխությամբ, օգնում է բացատրել քաղաքացիների վարքագծի համախառն շարունակականությունը՝ կանադական օրենքներին ենթարկվելը, Կանադայի պատերազմներին մասնակցելը, կանադական դրոշը պատվելը, եթե նույնիսկ նրանք մտադիր չեն լինելու «լավ կանադացիներ»⁵⁹:

Այս առումով հետաքրքրական է Հ. Գրոթիուսի մոտեցումը: Մասնավորապես նա գրում է. «**Այս արհեստական մարմինները ունեն սերտ նմանություն բնական մարմնին, որը, չնայած իր բաղադրիչ մասնիկների փոփոխությանը, չի կորցնում ինքնությունը այնքան ժամանակ, քանի դեռ ընդհանուր ձևը պահպանվում է... Այնպես որ ազգը ներկայումս նույնն է, ինչ որ եղել է հարյուր տարի առաջ, այնքան ժամանակ, քանի դեռ ոգին, որը սկզբում ձևավորեց և հետո պահեց մարմինը միասին, պահպանում է իր ինքնությունը, թեպետ և նախորդ շրջանի իր անդամներից ոչ մեկը այժմ չի ապրում:** Այսպես ժողովրդին դիմելու սովորույթ է առաջացել՝ ներկայումս ապրողներին վերագրելու բազում դարեր առաջ եղածը, ինչը կարելի է տեսնել և՛ պատմիչների (profane historians) մոտ, և՛ սուրբ գրքերում: Այսու՝ Տակիտուսի մոտ, Անտոնիուս Պրիմուսը ծառայելով Վեսփասիանուսին, երրորդ լեգիոնի զինվորներին հիշեցնում է նախորդ ժամանակներում իրենց արածների մասին, թե ինչպես են նրանք Մարկուս Անտոնիուսի հրամանատարությամբ հաղթել պարթևներին, և Կորբուլոնի հրամանատարությամբ՝ հայերին: Ավելի շատ նախապաշարմունք կար, քան, հետևաբար, ճշմարտություն նաև Պիզոնի՝ իր ժամանակի աթենացիներին ուղղված նախատիքի մեջ, որը մերժում էր նրանց համարել աթենացիներ, քանզի նրանց տեսակը վերացել էր բազում աղետներից, և նրանք ավելին չէին, քան երկրի բոլոր ազգերի խառնուրդ: Մենք ասում ենք՝ այս նախատիքում կար ավելի շատ նախապաշարմունք, քան ճշմարտություն: Թեպետ այդպիսի խառնուրդը կարող էր նվազեցնել արժանապատվությունը, այն չէր կարող ոչնչացնել ազգի գոյությունը: Նա ինքն էլ գիտեր սա: Քանզի նա նախատում էր իրօրյա աթենացիներին նախորդ ժամանակներում Փիլիպոս Մակեդոնացու դեմ իրենց տկար ջանքերի և իրենց լավագույն ընկերների նկատմամբ ապերախտության համար: Այժմ, քանզի իր բաղադրիչ մասերի փոփոխությունը չի կարող ոչնչացնել ազգի ինքնությունը, ոչ էլ անգամ հազարամյակը կամ ավելին, այնպես էլ չի կարող մերժվել, որ

58 Տե՛ս նույն տեղում, էջ 161:

59 **Wendt A.**, Social Theory of International Politics, p. 162.

ազգը կարող է կորցնել իր գոյությունը երկու եղանակով՝ իր բոլոր անդամների վերացումով կամ իր ձևի և ոգու վերացումով: Այս կերպ նաև՝ յուրաքանչյուր համայնքի դեպքում: Ազգը կորցնում է իր ձևը՝ կորցնելով իր բոլոր կամ որոշ ընդհանուր իրավունքները, և սա տեղի է ունենում, երբ ամենքը ստրկացված են, ինչպես միլենացիները, ուլքեր վաճառվեցին արգիվացիներին (Argives) արայացիների կողմից, օլինթացիները (Olynthians) Փիլիպոսի, թեբեացիները Ալեքսանդրի և բրուիացիները (Brutians) ստրկացվեցին հռոմեացիների կողմից, կամ երբ, թեպետ և պահպանում են իրենց անձնական ազատությունը, գրկված են ինքնիշխանության իրավունքներից»⁶⁰:

Ըստ Գրոթիուսի՝ ամենևին էլ տարբերություն չկա, թե ինչպիսին է կառավարման ձևը՝ միապետական, արիստոկրատական, թե՛ դեմոկրատական: Այսպես, «հռոմեական ժողովուրդը նույնն էր՝ անկախ թագավորական, կոնսուլական, թե կայսերական կառավարումից... Երբ թագավորը կամ թագավորական ընտանիքը վերանա, ինքնիշխանության իրավունքները կվերադառնան ժողովրդին, քանզի ինքնիշխանությունը ներհատուկ է թագավորին՝ իբրև գլխի, ժողովրդին՝ իբրև մարմնի և, հետևաբար, նաև ընտրովի կառավարությանը: Եվ ամենևին էլ այս փաստարկը չի տապալվել Արիստոտելի առարկությամբ, ով ասում է, որ եթե կառավարման ձևը փոխվում է, պետությունն այլևս նույնը չէ, ինչպես երաժշտության ներդաշնակությունն է ամբողջությամբ փոխվում դորիականից փոնոգիական չափմանն անցնելիս»⁶¹: «Հնում լակեդեմոնացիներն ու աթենացիները, գրում է Գրոթիուսը, – ձգտում էին ոչ այնքան տիրապետության նվաճված քաղաքների և պետությունների նկատմամբ, որքան սուկ ցանկանում էին, որ նրանք ևս որդեգրեին նույն կառավարման ձևը, ինչպիսին իրենցն էր. լակեդեմոնացիները ապրում էին արիստոկրատական, աթենացիները՝ դեմոկրատական համակարգով: Բայց թե արդյո՞ք այդպիսի փոփոխությունները նպաստում էին նվաճողի անվտանգությանը, մեր ուսումնասիրության նպատակը չէ»⁶²:

Խմբային համոզմունքները հաճախ դրոշմված են «հավաքական հիշողության», առասպելների, պատումների և ավանդույթների մեջ, որ սահմանում են, թե ով է խումբը, և ինչպես է այն հարաբերվում ուրիշներին: Այս պատումները սուկ ընդհանուր համոզմունքներ չեն, որ կրում են անհատները յուրաքանչյուր պահի (թեպետ և կախված են այդ համոզմունքներից), այլ պատմական իրողություն են, որը պահպանվել է սոցիալիզացիայի և ծիսակարգերի շարունակական գործընթացներով: Այսպիսի հիշողությունների շնորհիվ է, որ խմբերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում շարունակականություն և ինքնություն: Այնքան ժամանակ, քանի դեռ անհատներն իրենց դիտարկում են իբրև հավատարիմ ու խմբին նվիրված, հավաքական հիշողությունները իբրև հավաքական գործողության համախմբման միջոց հասանելի կլինեն, եթե անգամ, ֆենոմենոլոգիական իմաստով, անհատները չեն հավատում, և, այդպիսով, դրանք

60 Grotius, Hugo, The Rights of War and Peace, pp. 118–119.

61 Grotius, Hugo, The Rights of War and Peace, p. 120.

62 Նույն տեղում, էջ 374:

կարող են օգնել բացատրելու ամփոփ վարքագծի մոդելները⁶³:

Այդ կերպ, պետությունները դերակատարներ են, որոնց վարքագիծը պայմանավորված է շահերի բազմազանությամբ, որոնք արմատացած են կորպորատիվ, տեսակային, դերային և հավաքական ինքնություններում: Եվ այս ինքնությունները տարբերվում են մշակութայնորեն ու պատմականորեն, հետևաբար տարբերվում է նաև շահերի բովանդակությունը: Այնուամենայնիվ, պետությունները կիսում են էական ընդհանրություններ շնորհիվ կորպորատիվ ինքնության, որը առաջացնում է համընդհանրական ազգային շահեր (“universal national interests”)⁶⁴:

Գրոթիուսը, բացահայտելով հասարակական իրողության համակցական բնույթի անխուսափելիությունը և հղում կատարելով Մենեկային, գրում է. «Մարդկային մարմնի բոլոր անդամները համաձայնում են միմյանց միջև, քանզի յուրաքանչյուրի պահպանումը նպաստում է ամբողջի բարօրությանը, այնպես որ մարդիկ պետք է զգուշանան փոխադարձ վնասներից, քանզի նրանք ծնվել են հասարակության համար, որը չի կարող ապրել, քանի դեռ իր բոլոր մասերը պաշտպանված չեն փոխադարձ զսպվածությամբ և բարի կամքով: Բայց քանզի գոյություն ունի մի տեսակի ընկերային կապ՝ հիմնված հավասարության վրա, օրինակ՝ եղբայրների, քաղաքացիների, ընկերների, դաշնակիցների միջև, և այլ՝ հիմնված գերակայության վրա, ինչպես Արիստոտելն է դասակարգում, այն գոյություն ունի ծնողների և երեխաների, տերերի և ծառաների, ինքնիշխանների և հպատակների, Աստծո և մարդկանց միջև: Այսպես, արդարությունը իրականանում է կամ հավասարների շրջանում, կամ կառավարողների և կառավարվողների միջև՝ անկախ իրենց աստիճանի տարբերությունից: Մրանցից նախորդը, եթե ես չեմ սխալվում, կարելի է կոչել հավասարության իրավունք և հաջորդը՝ ավագության իրավունք»⁶⁵:

Ընդգծելով հավաքական ինքնության⁶⁶ իրողությունը՝ Գրոթիուսը գրում է. «Նրանց կարծիքը, ովքեր ստածում են, թե ընկերությունը ծագում է միայն անհրաժեշտությունից, իբրև կեղծ, մերժված է ավելի ողջամիտ իմաստասերների կողմից, քանզի մենք զգում ենք ինքնաբերական և բնական հակում դեպի ընկերային հարաբերությունը: Գոյությունը, իրոք, հաճախ հորդորում է և որոշ դեպքերում պատվիրում մեզ նախընտրել շատերի

63 Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*, p. 163.

64 Նույն տեղում, էջ 233:

65 **Grotius, Hugo**, *The Rights of War and Peace*, p. 19.

66 Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*, p. 106. Ըստ Վենտի կոնստրուկտիվիստական տեսության՝ այն միջազգային համակարգում, ուր պետություններն ունեն էական հավաքական ինքնություն, քիչ հավանական է, որ նրանք զգան, թե իրենց անվտանգությունը կախված է մեկը մյուսի ռազմական ուժի զսպումից կամ հավասարակշռումից. «Պետությունները զսպում են ընդդեմ սպառնալիքների (threats), ոչ թե ուժի, քանի դեռ պետությունները վստահ են, որ ուրիշները նույնականանում են իրենց անվտանգության հետ, նրանք չեն դիտարկի մեկը մյուսին իբրև ռազմական սպառնալիքներ: Ճիշտ է, այդպիսի վստահությունը բարդ է ստանալ, բայց դա հնարավոր է: Այսօր Կանադան այդքան էլ անհանգստացած չէ իր անվտանգությանը ամերիկյան սպառնալիքով, կամ էլ Բրիտանիան՝ ֆրանսիական վտանգով: Ջսպելու և հավասարակշռելու փոխարեն պետությունները, որոնք հասել են փոխադարձ նույնականացման այս մակարդակին, ավելի շատ հակված են իրենց անվտանգությունը հարողորդելու օրենքի գերակայությամբ վեճերը կարգավորելիս և հավաքական անվտանգությամբ արտաքին սպառնալիքի դեմ՝ «բոլորը մեկի, մեկը բոլորի համար» սկզբունքով: Այս կերպ ձևավորվում է միջազգային հավաքական «ես»-ը:

բարիքը մեր անհատական օգուտից»⁶⁷:

Աշխարհակարգի գրոթիուսյան մոդելը «ընդհանուր գաղափարներ»-ի ազդեցության խնդիրը չէ, այլ միջազգային հանրության առկայությունը: Քանզի ընդհանուր գաղափարներն իբրև կանոն ի գորու են կարգավորելու տարբեր կարգի սոցիոլոգիական խնդիրներ, բայց երբեմն անկարող են այդ անել քաղաքական խնդիրների նկատմամբ: Այն է՝ հինգ հարյուր բրիտանական միջուկային մարտագլխիկները ավելի քիչ են սպառնում ԱՄՆ-ին, քան հինգ Հյուսիսկորեականները: Ոչնչացման ուժերին իմաստավորում են ապակառուցողական հարաբերությունները (“relations of destruction”), որում դրանք ներդրված են: Իսկ համագործակցող կամ հակամարտող ընդհանուր գաղափարները կառուցում են բռնությունը պետությունների միջև: Այս գաղափարները սահմանում են անհատականության դերերը կամ պայմանները, որի միջոցով պետությունները փոխազդում են⁶⁸:

«Քրիստոնեական աշխարհի կառավարիչներին և ազատ ու անկախ ազգերին» ուղղված իր ուղերձում Հ. Գրոթիուսը գրում է. «Եթե այսօր քննենք այն սովորույթը, թե երբևէ մարդկությանը առնչվող որևէ բան առնչվեր նաև որևէ մեկին, մենք վստահորեն կապրեինք շատ ավելի խաղաղ աշխարհում: Քանզի շատերի ինքնավստահությունը կնվազեր, և նրանք, ովքեր հիմա անտեսում են արդարությունը նպատակահարմարության պատրվակով, կնոռանային անարդարության դասը ի վնաս իրենց... Ոչինչ ավելի ցանկալի չէ, որքան սա կարող է լինել այն մարդկանց համար, ովքեր կարծում են, թե երջանկության առաջին պայմանը լավ գործերն են, երկրորդը՝ բարի համբավը»⁶⁹:

Այս կերպ, իր ազատ ծովերի տեսության համապատկերում Գրոթիուսը հիմնավորում է միջազգային ռեժիմի⁷⁰ անհրաժեշտությունը: Միջազգային ռեժիմները սովորաբար սահմանվում են իբրև ընկերային հաստատություններ, որոնց անդամների ակնկալիքները միջազգային խնդիրների շուրջ համընկնում են: Դրանց ընդգծումը՝ իբրև ռեժիմների սահմանադիր հենք, ռեժիմներն օժտում է անխուսափելի միջառարկայական որակներով: Հետևաբար մենք ձանաչում ենք ռեժիմներն իրենց ցանկալի և ընդունելի ընկերային վարքագծի սկզբունքային ու ընդհանուր ըմբռումներով: Այսու՝ ռեժիմների գոյաբանությունը հենված է ամուր միջառարկայական տարրի վրա, ինչը էական ազդեցություն ունի դերակատարների վարքագծի վրա⁷¹:

67 Grotius, Hugo, The Rights of War and Peace, p. 80.

68 Sñu Wendt A., Social Theory of International Politics, pp. 254-255.

69 Grotius, Hugo, The Freedom of The Seas, p. 6.

70 Sñu Kratochwil F. and Ruggie J., նույն տեղում, էջ 759: Ֆ. Կրատոքվիլը միջազգային ռեժիմների ֆենոմենը սահմանում է իբրև պետությունների կողմից կառուցարկված կառավարման մեխանիզմներ (governing arrangements)՝ կոչված համակարգելու նրանց ակնկալիքները և կազմակերպելու միջազգային վարքագծի նորմերը տարբեր բնագավառներում: Օրինակները ներառում են առևտրի ռեժիմները, արժույթի ռեժիմները, օվկիանոսների ռեժիմները և այլն:

71 Sñu Kratochwil F. and Ruggie J., նույն տեղում, էջեր 764-769: Միջազգային ռեժիմների հոլացքը բաղկացած է չորս վերլուծական բաղադրիչներից՝ սկզբունքներ (“beliefs of fact, causation, and rectitude”), նորմեր (“standards of behavior defined in terms of rights and obligations”), կանոններ (“specific prescriptions and proscriptions for action”) և որոշումների կայացման ընթացակարգեր (“prevailing practices for making and implementing collective choice”).

Միջազգային հարաբերությունների կոնստրուկտիվիստական տեսության համաձայն՝ արտաքին ինքնիշխանության փոխադարձ ճանաչումը ևս կարևոր մեղմացուցիչ հանգամանք է միջազգային անարխիայի համար: Այս կերպ Վենտը Գրոթիուսի նման ընդգծում է, որ «պետությունը կարող է ունենալ արտաքին ինքնիշխանություն, եթե անգամ այն ճանաչված չէ այլ պետությունների կողմից»: Նշենք, որ ի տարբերություն գրոթիուսյան մոդելի, Հոբսյան (ռեալիստական) միջազգային համակարգերում պետությունների ինքնիշխանությունը «փորձարարական» կամ փաստացի երևույթ է (empirical or de facto): Իսկ Լոկյան (լիբերալ) միջազգային համակարգերում պետությունների ինքնիշխանությունը իրավական (juridical) և ոչ թե պարզապես փորձարարական երևույթ է⁷²:

Միջազգային հանրության հղացքի և ինքնիշխանության սկզբունքի համապատկերում հատկանշական է Գրոթիուսի հետևյալ մոտեցումը. «Այլոց համար պատերազմելու երրորդ պատճառն այն է, ուր բարեկամական իշխանությանը ուղղակիորեն աջակցություն չի խոստացված, այն պետք է տրվի ի հաշիվ բարեկամության, եթե կարող է իրականացվել առանց անհարմարության: Այս սկզբունքով Աբրահամը զենք վերցրեց ի պաշտպանություն իր ազգական Լոտի, և հռոմեացիները արգելեցին անթիաթեցիների (Antiaties) ծովահենային գործողությունները հույների նկատմամբ՝ իբրև իտալիկներին համարժեք ժողովրդի: Հռոմեացիների դեպքում ամենևին էլ արտասովոր չէր պատերազմներ սկսելը կամ գոնե պատերազմներով սպառնալը ոչ միայն ի պաշտպանություն դաշնակիցների, որոնց հետ նրանք կապված էին պայմանագրով, այլև բարեկամների: Վերջին և ամենամեծ շարժառիթը մեկ ընդհանուր բնույթի ընդհանուր կապն է (the common tie of one COMMON NATURE – hominum inter fe conjunctio), ինչը միայն բավարար է պարտավորեցնելու մարդկանց, որ օգնեն միմյանց: Հարց է, թե արդյոք մի մարդը պարտավոր է պաշտպանել մյուսին, կամ մի ազգը մեկ այլ ազգին անարդարությունից և ազդեցիկաց... Թեպետ բնական իրավունքով և ընկերային կարգով սահմանված, ինչպես նաև պատմական վկայություններով հաստատված կանոն է, որ յուրաքանչյուր ինքնիշխան գերագույն դատավոր է իր թագավորությունում և իր հպատակների համար, որոնց վեճերին ոչ մի օտար իշխանություն չի կարող արդարացիորեն միջամտել»⁷³:

Այս համատեքստում ինքնիշխանության սկզբունքը փոխակերպում է իրավիճակը՝ ապահովելով սոցիալական հենարան պետությունների անվտանգության և անհատականության համար: Ինքնիշխանությունը հաստատություն է և գոյություն ունի միայն շնորհիվ որոշակի միջառարկայական ըմբռնումների և ակնկալիքների. **չկա ինքնիշխանություն առանց «ուրիշի»**: Այս ըմբռնումները և սպասումները ոչ միայն սահմանում են

72 Տե՛ս **Wendt A.**, Social Theory of International Politics, p. 208. Միջազգային քաղաքականության պատմության մեծ մասը պետությունները ապրել են **Հոբսյան մշակույթում**: 17-րդ դարում եվրոպայում ձևավորվեց **Լոկյան մշակույթը**, որտեղ հակամարտությունը զսպվում էր ինքնիշխանության փոխադարձ ճանաչմամբ: Այս մշակույթն էլ դարձավ գլոբալ, թեև զուգահեռ պահպանում էր **Հոբսյան մշակույթի** որոշ տարրեր: Ըստ Վենտի՝ 20-րդ դարի վերջում միջազգային համակարգում մեկնարկել է մեկ այլ կառուցվածքային փոփոխություն դեպի հավաքական անվտանգության **Կանտյան մշակույթ**:

73 **Grotius, Hugo**, The Rights of War and Peace, pp. 287–288.

պետության որոշակի տեսակ՝ ինքնիշխան պետություն, այլ նաև սահմանում են համայնքի որոշակի կերպ, քանզի ինքնությունները հարաբերական են: Եվ ինչպես Վենտն է ձևակերպում. «Այս համայնքի էությունը սահմանափակ տարածքում բացառիկ քաղաքական իշխանության իրագործման միմյանց իրավունքի փոխադարձաբար ճանաչումն է»⁷⁴:

Արդի միջազգային հանրային իրավունքը ունի հստակեցված ճանաչման կանոններ, և այս կանոնները առաջին հերթին պահանջում են պետությունների ճանաչումը այլ պետությունների կողմից միջազգային իրավական ռեժիմում անդամակցելու համար: Պետությունների ճանաչումը և պետությունների կողմից ճանաչումը երկու կողմերից էլ ինքնիշխանությունը գործառական է դարձնում: Ճանաչման բոլոր ակտերը կարգավորիչ հետևանքներով ինքնիշխան ակտեր են⁷⁵:

Մի կողմից ինքնիշխան լինելը նշանակում է ունենալ բացառիկ իշխանություն որոշակի տարածքի նկատմամբ: Մյուս կողմից տարածքը և իշխանությունը կորցրած պետությունը կարող է ևս համարվել ինքնիշխան, քանզի ինքնիշխանությունը ներհատուկ է պետական անհատականությանը: Ինքնիշխանության այս առանձնահատկության շնորհիվ է, որ պետությունները կարող են հարաբերվել միմյանց և ինքնիշխան պետությունների կառույցի հետ, քանզի դա նշանակում է, որ իրենց գոյությունն անկախ է: Ինքնիշխան պետությունների Վեստֆալյան համակարգի մշակույթը հիմնված է փոխադարձ ճանաչման սկզբունքի վրա, ինչն ապահովում է յուրաքանչյուր պետության իրավունքները և ազատությունները (օրինակ՝ ապահովագրում արտաքին ներխուժումից, հավասարություն միջազգային իրավունքի առջև): Այսինքն՝ այն հնարավորությունները, որոնք իրենք իրենց համար ապահովել կարող են միայն հզոր պետությունները⁷⁶:

Ամփոփենք: Հուգո Գրոթիուսի քաղաքական միտքը միջազգային հարաբերությունների պատմության մեջ նոր ժամանակաշրջան ուրվագծեց՝ ստեղծելով ընդհանրական սկզբունքների համակարգ և կառուցարկելով նոր՝ միջազգային իրողությունը, որը փոխարինեց Կայսրության և Եկեղեցու հիերարխիայով պայմանավորված միջնադարյան համընդհանրական աշխարհակարգին: Գրոթիուսի միջազգային քաղաքական տեսության հիմքում ընկած է այն մոտեցումը, ինչը արդի դիտանկյունից բնորոշվում է կոնստրուկտիվիստական: Ըստ այդմ, ազգերը (պետությունները) համախմբված են ընդհանուր համոզմունքներով և կազմակերպական կառույցներով, որոնք տալիս են նրանց օրինական հարկադրանքի տարածքային մենաշնորհ: Գրոթիուսը հասարակական իրողության համակեցությանը բնույթի անխուսափելիությունը տարածում է ազգերի և պետությունների վրա՝ առաջ քաշելով միջազգային հանրության հղացքը և համակարգելով արդի միջազգային իրավունքը, որի շուրջ համաձայնությունը ընդհանուր գաղափարների և որոշակի հավաքական ինքնության գործառույթ է:

Հետևաբար, միջազգային հարաբերություններում կոնստրուկտի-

74 Wendt A., Anarchy is what States Make of it, p. 412.

75 Տնն Օնոֆ N., The Constitution of International Society, p. 17.

76 Տնն Wendt A., Social Theory of International Politics, p. 182.

Վիստական մոտեցման առանցքը միջինքնութենական հարաբերությունների խնդիրն է, քանզի ինքնություններն են ուղղորդում շահերը և պայմանավորում գործողությունները: Այս կերպ, ազգերի և ազգերի հասարակության վերաբերյալ Գրոթիուսի իդեալիստական և ստրուկտուրալ-հոլիստական մոտեցումը հանդիսանում է միջազգային հարաբերություններում կոնստրուկտիվիզմի տեսության հիմքը:

Տիգրան Ռ. Եփրեմյան-գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է միջազգային համակարգերի պատմությունը, Հուգո Գրոթիուսի քաղաքական իմաստասիրությունը, Վեստֆալյան աշխարհակարգը, Եվրասիական աշխարհաքաղաքականությունը, հայկական Սփյուռքը, միջազգային հարաբերությունների կոնստրուկտիվիստական տեսությունները («անգլիական դպրոց», նեոգրամշիականություն, քաղաքակրթությունների բախում):

Summary

CONCERNING THE SOURCES OF CONSTRUCTIVISM: HUGO GROTIUS

Tigran R. Yepremyan

The paper discusses Hugo Grotius' international political thoughts and their influence on the formation of constructivist thinking in international relations from the perspective of modern constructivism. In relation to Grotius' thought different constructivist approaches to international politics are taken into consideration. Therefore, the paper proceeds with the conceptualization of the influence of Grotius' political thought on the theory and practice of international relations in the light of constructivism and speech act theory. Hence, Grotius' idealistic and holistic approach towards nations and society of nations is regarded within the framework of Alexander Wendt's theory of structural constructivism. According to these approaches, nations (states) are constructed with common beliefs and organizational structures that give them territorial monopoly of legitimate violence. This comprehensive perspective allows us better understand the evolution of holist and structuralist theories of international relations and Grotius' role in the formation of constructivist theories in international relations.

Резюме

ИЗ ИСТОКОВ КОНСТРУКТИВИЗМА: УГО ГРОЦИЙ

Тигран Р. Епремян

В статье обсуждается международная политическая мысль Уго Гроция и ее влияние на формирование конструктивистского мышления в международных отношениях с точки зрения современного конструктивизма. Рассматриваются различные конструктивистские подходы к международной политике по отношению к политической мысли Гроция. Таким образом, статья переходит к концептуализации влияния политической мысли Гроция на теорию и практику международных отношений сквозь призму конструктивизма и речевых актов. Следовательно, идеалистический и холистический подход Гроция к нациям и к обществу наций рассматривается в рамках теории структурального конструктивизма Александра Вендта. В соответствии с этими подходами, нации (государства) строятся с общими убеждениями и организационными структурами, которые дают им территориальную монополию легитимного насилия. Этот всеобъемлющий подход позволяет нам лучше понять эволюцию холистических и структуралистских теорий и роль Гроция в формировании конструктивистских теорий международных отношений.

ՀԻՍՏՈՒՆԻՔԱԿԱՆ
ՄԱՍԻՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻԶՄԻ
ՄԱՍԻՆ ԳՐՈՑԻՅԻ

ՉԼԻ ԽԱՆԿԱԿԱՅԿԱԿԱՐԿՅԱՆ ԽԱՆԻՐԵԱՆ
Զ (ԺԲ) ՄԱՍԻՔ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՐԴԵՐԻՆԻՐ-ՊԵՐԿՐԵՐԵՐԻՆԻՐ, 2014

ՉԼԻ ԽԱՆԿԱԿԱՅԿԱԿԱՐԿՅԱՆ ԽԱՆԻՐԵԱՆ